ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 9

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի 2019թ. մայիսի 16-ի ժամը 15-ի նիստի

Ներկա էին գիտական խորհրդի 67 անդամներից 54-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ամբիոններում:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ Վ.Աբրահամյան, Ն.Գրիգորյան, Կ.Սուքիասյան, Գ.Մարմարյան, Հ.Նաղաշյան, Տ.Չիթչյան:

2. «ՀԱԱՀ-ի տեղեկագիր» գիտական պարբերականի անվանափոխության վերաբերյալ:

Զեկուցող՝ Հ.Ծպնեցյան

2. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նիստը սկսվեց համալսարանի ՀԱԱՀ անվանական կրթաթոշակառու լինելու վերաբերյալ հավաստագրերի հանձնումով:

Լսեցին՝ Անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետի ամբիոնների վարիչների հաղորդումները ամբիոնների ձեռքբերումների ու խնդիրների վերաբերյալ

/ զեկուցումները կցվում են/:

Զեկուցողները ներկայացրեցին ամբիոններում դասավանդվող առարկաներն ու դրանց ժամաքանակը, ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման գործընթացը, պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածությունը կազմակերպվող անգլերենի և համակարգչի դասընթացներին: Անդրադարձ եղավ նաև ամբիոններում կատարվող գիտական աշխատանքներին, տպագրված գիտակկան հոդվածներին: Գրեթե բոլոր ամբիոնների վարիչները արձանագրեցին լսարանային պայմանների և

լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության արդիականացման անհրաժեշտությունը: Հարց բարձրացվեց անատոմիական գիտաուսումնական թանգարանի վերաբերյալ:

Նշվեց, որ պետք է վերահիմաստավորել անասնաբույժ-անասնաբույծի մասնագիտության ընկալումը: Պրոֆ.Վ.Վ.Աբրահամյանը ասաց, որ հանրությունը պետք է հասկանա, որ անասնաբույժը հասարակության առողջության համար պատասխանատու մասնագետ է:

Ուղղտում առկա խնդիրներից քննարկվեցին անասնաբույժների ներկայիս ցածր աշխատավարձերը:

Արտահայտվեցին՝ Ռեկտոր Վ.Ուռուտյանը նշեց, որ ՀՀ Կառավարությանն է ներկայացվել համալիր ծրագիր, որը նախատեսում է հիմնովին վերա-նորոգել ֆակուլտետի Արեշի մասնաշենքը, արդիականացնել և վերազինել լաբորատորիաները: Ֆակուլտետի ուսումնական ամբողջ գործընթացը տեղափոխել այնտեղ, որը հնարավորություն կտա ստեղծել միջազգային չափորոշիչներին համապատասխան անասնաբուժության և անասնաբու-ծության գիտակրթական, խորհրդատվական կենտրոն:

Անդրադարձ եղավ ՀԱԱՀ-ի անատոմիական գիտաուսումնական թանգարանի նոր արդիական տեխնոլոգիաներով վերազինման, թվայնացման և վերաբացման ուղղությամբ:

Կարևորելով անասնաբույժի մասնագիտությունը ռեկտորը նշեց, որ անասնաբույժը պարտավոր է բացահայտել և կանխել սննդի միջոցով կենդանիներից մարդուն փոխանցվող հիվանդություններն ու կենդանածին համաճարակները, սա է անասնաբույժի մասնագիտության արդիական ընկալումը: Մասնագիտությունը առավել գրավիչ, ժամանակակից և մրցունակ դարձնելու նպատակով, առաջարկեց քննարկել ֆակուլտետի և մասնագիտությունների անվանափոխության հարցը: Ռեկտորը տեղեկացրեց գիտական խորհրդին, որ նախատեսվում է ՀԱԱՀ-ում ստեղծել կենդանիների խնամքի և օգտագործման հարցերը կարգավորող էթիկայի հանձնաժողով:

Կապված բջջային հեռախոսների հետ հանձնարարվեց խստորեն արգելել դասի ժամանակ դրանց օգտագործումը:

Կարևոր խնդիրներից է նաև այլ գիտական կենտրոնների հետ համագործակցության եզրեր ստեղծելը և ստացված գիտական արդյունքները ինտեգրել կրթական գործընթացի մեջ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

Լսեցին՝ Գիտական գծով պրոռեկտոր, պրոֆ. Հ.Ծպնեցյանի հաղորդումը «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական պարբերականի անվանափոխության մասին:

«Տեղեկագիր» գիտական պարբերականը հիմնավորվել է 2003-ին: Իր գոյության ընթացքում պարբերականը հիմնականում լուծել է համալսարանի առջև ծառացած հրատարակչական խնդիրները: Հաշվի առնելով գիտական պարբերականին ներկայացվող ներկայիս պահանջները, մասնավորապես այն, որ գիտական պարբերականի անվանումը պետք է համահունչ լինի հիմնադիր գործունեության հիմնական ուղղություններին և չկրկնի այլ պարբերականների անվանումները, առաջարկեց «ՀԱԱՀ-ի տեղեկագիր» գիտական պարբերականն անվանափոխել որպես «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոգիտություն և տեխնոլոգիաներ»: Նշվեց, որ «Տեղեկագիր» պարբերականների միջազգային ստանդարտ համարա-կալման համակարգում գրանցվել և համարանիշ է ստացել մինչր Հայաստանի ազգային ագրարային համալսարան անվանափոխվել է, հետևաբար այս դեպքում պահանջ է նոր համարանիշի ստացումը և գրանցումը:

Որոշեցին՝ Հավանություն տալ առաջարկությանը և «ՀԱԱՀ-ի տեղեկագիր» գիտական պարբերականը անվանափոխել որպես «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոգիտություն և տեխնոլոգիաներ» և հետագա ընթացք տալ անվանափոխության գործընթացին:

Լսեցին՝ Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանին, որը անդրադարձավ դիպլոմային աշխատանքների (նախագծերի) որակին, ծավալին, տեխնիկական և բովանդակային խնդիրներին, թեմաների : արդիականության: Նշվեց, որ հաճախ վերնագրերը չեն առնչվում աշխատանքի բովանդակությանը, իսկ եզրակացությունները և առաջարկությունները փաստարկված չեն: Պրոռեկտորը անդրադարձավ նաև դիպլոմային

աշխատանքների կրկնության, գրագողության, ոչ պատշաճ գրախոսման, աշխատանքների ղեկավարների և խորհրդատուների ընտրությանն առնչվող հարցերին:

Արտահայտվեցին՝ Ա.Ամիրյանը, Հ.Հարությունյանը, Գ.Վարդանյանը, Կ.Մինասյանը, Վ.Մելքոնյանը, որոնք առաջարկեցին կազմակերպել անվճար AutoCad ծրագրակազմի դասընթացներ, որի իմացությունը թույլ կտա հրաժարվել ձեռքով արվող գծագրերից, բայց ցանկություն հայտնեցին ցածր կուրսերից սկսել թե տեքստային թե հաշվարկագրաֆիկական աշխատանքների գծագրերը կատարել համակարգչով:

Որոշեցին՝ Լսելով և քննարկելով վերոհիշյալ հարցը, գիտական խորհուրդը միաձայն

ո ր ո շ ում է՝

(որոշումը կցվում է):

Լսեցին՝ Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ Արմինե Էդվարդի Մեժլումյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի մասնակի փոփոխության և գիտական ղեկավարի վերահաստատման հարցը:

Որոշեցին՝ Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ Արմինե Էդվարդի Մեժլումյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կառավարչական հաշվառման հիմնախնդիրները կազմակերպությունների ներքին վերահսկողության համակարգում /Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի նյութերով/» վերնագրով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար վերահաստատել տնտեսագիտության դոկտոր, Արմեն Աշմատի Հակոբյանին:

Լսեցին՝ Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ Անի Գևորգի Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեմայի մասնակի փոփոխության և գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Որոշեցին՝ Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդ Անի Գևորգի Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ավանդների երեշխավորման համակարգի ազդեցությունը բանկերի ֆինանսական կայունության վրա /Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի

նյութերով/» վերնագրով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության դոկտոր,Արմեն Աշմատի Հակոբյանին:

Լսեցին՝ Տվյալագիտության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ռազմիկ Արամի Ահարոնյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Որոշեցին՝ Տվյալագիտության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ռազմիկ Արամի Ահարոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ազգային հաշիվների համակարգում համախառն տարածաշրջանային արդյունքի հաշվարկման և կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության թեկնածու պրոֆեսոր Գ.Վ.Վարդանյանին:

Լսեցին՝ Տվյալագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Հայկ Արմենի Նիկողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Որոշեցին՝ Տվյալագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Հայկ Արմենի Նիկողոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Դրամական հոսքերի վերլուծությունը և ֆինանսական առողջացման կառուցակարգերը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններում» վերնագրով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության թեկնածու պրոֆեսոր Գ.Վ.Վարդանյանին:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան